ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՇՄՆԷՊԾ-ՄԱԾՁԲ-25/55

ք. Երևան «11» ապրիլի 2025թ.

Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Լուսինե Ալեքսանյանի, այսուհետ՝ /Պատվիրատու/, մի կողմից, և «Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախումբ» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրենի ժ/պ՝ Հարություն Բարղությանի, այսուհետ՝ /Կատարող/, մյուս կողմից, միասին անվանվելով /Կողմեր/, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1.Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար՝ սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված կարգով:

1.2. Սույն պայմանագրով Պատվիրատուին մատուցվելիք ծառայությունները ներառում են՝

1.2.1. Հայաստանի Հանրապետության օրիներգը «կենդանի կատարմամբ և որոշակի որակական ստանդարտին համապատասխան»:

2.Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Կատարողը պարտավոր է՝

2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով և ամբողջ ծավալով,

2.1.2. Պատվիրատուի պահանջով անհապաղ և անհատույց վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները,

2.1.3. Անձամբ կատարել Ծառայությունները,

2.2 Կատարողն իրավունք ունի ՝

2.2.1 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված կարգը երկու անգամ խախտելու դեպքում՝ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից:

2.3 Պատվիրատուն իրավունք ունի ՝

2.3.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը,

2.3.2. Ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ Կատարողին վճարելով սահմանված գնի այն մասը, որը համապատասխանում է մինչև պայմանագրի կատարումից Պատվիրատուի հրաժարման մասին տեղեկություն ստանալը մատուցված Ծառայությունների չափին:

2.3.3. Պատվիրատուն պարտավոր է Ծառայությունների դիմաց վճարել սույն պայմանագրի 3-րդ կետում նշված գնին և կարգին համապատասխան:

3.Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը

3.1. Ծառայությունների ընդհանուր գինը կազմում է 1 300 000 /մեկ միլիոն երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ, (հարկերը և այլ պարտադիր վճարները ներառյալ):

3.2. Պատվիրատուն պարտավորվում է վճարել պատշաճ կատարված ծառայությունների հանձնման-ընդունման ավարտից 5 աշխատանքային օրվա ընթացքում անկանխիկ եղանակով՝ Կատարողի նշած բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

4.Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ – ՄԱԺՈՐ)

4.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. Այլ պայմաններ

5.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5.2. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել կողմերից յուրաքանչյուրի կողմից՝ այդ մասին մյուս կողմին մեկ շաբաթ առաջ գրավոր ծանուցելով:

5.3. Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր՝ երկկողմանի ստորագրմամբ:

5.4. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

5.5. Սույն պայմանագիրը կնքված է 2 (երկու) օրինակից՝ հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու՝	**Կատարող՝**
Շրջակա միջավայրի նախարարության Էկոպարեկային ծառայություն ք.Երևան, Ա. Արմենակյան 129 ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011023265 ՀՎՀՀ 00476409	«Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախումբ» ՊՈԱԿ ք.Երևան, Պուշկինի 60 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900018005166 ՀՎՀՀ 02508235
Գլխավոր քարտուղար Է. Ալեքսանյան ստորագրություն, կ.տ.	Տնօրենի ժ/պ՝ Հարություն Բարղության ստորագրություն, կ.տ.